## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Ես Գոհար Սահակյան եմ, ՀՀ 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ապարանից: Երիտասարդական աշխատանքի, համայնքային զարգացման, ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման ոլորտում ունեմ ավելի քան հինգ տարվա փորձ: Իմ գործունեությունը մշտապես ուղղված է համայնքների բաց, ներառական և մասնակցային զարգացման խթանմանը՝ ապահովելով երիտասարդների ակտիվ ներգրավվածությունն ու մասնակցությունը համայնքային գործընթացներում և որոշումների կայացման փուլերում:

Ավարտել եմ Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 2022 թվականի դեկտեմբերից հիմնադրել և համակարգում եմ «Aparan Youth Alliance» երիտասարդական նախաձեռնությունը, որի հիմնական նպատակը Ապարան համայնքի, մարզի երիտասարդների ներուժի միավորումն է և նրանց մասնակցության խթանումը համայնքային կյանքում, տեղական զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներում:

Նախաձեռնության էջում կարող եք մանրամասնորեն ծանոթանալ իրականացված և իրականացվող գործունեությանը:

- «Կանաչ քայլեր. երիտասարդների կրթում հանուն կայուն համայնքների» ծրագիրը՝ շրջակա միջավայրի պահպանության, ՏԻՄ -երիտասարդություն երկխոսության խթանում :
- Անձնային և սոցիալական հմտությունների զարգացման ուղղված ինտելեկտուալ խաղերի և դասընթացների կազմակերպում:
- Միջմարզային և միջհամայնքային համագործակցության խթանում՝ երիտասարդների միջև փորձի փոխանակման և ցանցային կապերի ձևավորման միջոցով:
- ՏԻՄ–երիտասարդ հանդիպումների շարք նպաստելով երիտասարդների ակտիվ ներգրավմանը համայնքային կյանքին:
- «ՄասնԱԿՑԻՐ» կրթական գործիքի ստեղծում և կիրառում երիտասարդների/բնակիչներին համայնքային կյանքի կազմակերպման գործընթացում ներգրավելու նպատակով: «ՄասնԱկցիր» կրթական գործիքի նպատակն է զարգացնել երիտասարդների գիտելիքներն ու հմտությունները առաջնորդության, ակտիվ քաղաքացիության և համայնքային կյանքի մասնակցության վերաբերյալ: «ՄասնԱկցիր» կրթական գործիքը իրենից ներկայացնում է սիմուլիացիոն խաղ, որի միջոցով երիտասարդները հնարավորություն ունեն ծանոթանալու համայնքային կյանքում որոշումների կայացման գործընթացներին, դրանցում քաղաքացիների դերին և կարևորությանը, ինչպես նաև զարգացնելու իրենց առաջնորդության և հաղորդակցության հմտությունները՝ խթանելով ակտիվ քաղաքացիությունն ու մասնակցությունը:

2024 թվականից առ այսօր աշխատում եմ նաև որպես Ապարան համայնքի ղեկավարի ռեֆերենտ՝ երիտասարդության հարցերով, որտեղ ներգրավված եմ համայնքային երիտասարդական քաղաքականության ձևավորման և իրականացման, ծրագրերի

համակարգման, երիտասարդների մասնակցության խթանման և ՏԻՄ–երիտասարդություն կայուն երկխոսության ապահովման գործընթացներում:
Հանդիսանում եմ Երիտասարդական եվրոպական դեսպան, որի նպատակը ԵՄ-ի կողմից Հայաստանում և Արևելյան գործընկերության երկներում իրազեկվածության բարձրացումն է: Միաժամանակ հանդիսանում եմ ԵՄ պատվիրակությանը կից Երիտասարդական խորհրդի (ԵԽ) անդամ:
Վստահ եմ, որ իմ փորձառությունը, համայնքային ոլորտի լավ իմացությունը, ինչպես նաև երիտասարդների հետ շարունակական աշխատանքը կարող են օգտակար լինել նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության համար՝ նպաստելով քաղաքականությունների մշակման և իրագործման փուլերում շահառուների ակտիվ ներգրավմանը:
Պատրաստ եմ իմ գիտելիքներն ու փորձը ներդնել խորհրդի արդյունավետ աշխատանքում՝ նպաստելով մասնակցային, թափանցիկ և ներառական կառավարման զարգացմանը:

<table>
<tr><td>Գրանցման հասցե</td><td colspan="2">ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Մ.Մաշտոցի 47 փ.</td></tr>
<tr><td>Բնակության հասցե</td><td colspan="2">ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Մ.Մաշտոցի 47 փ.</td></tr>
<tr><td rowspan="3"></td><td>Հեռ. բջջային</td><td>+374 98 512 536</td></tr>
<tr><td>Էլեկտրոնային փոստ</td><td>gsahakyan1999@gmail.com</td></tr>
<tr><td>Ֆեյսբուքյան էջի հղում</td><td>https://www.facebook.com/gohar.sahakian.2025?locale=en_EN</td></tr>
</table>